ԿԱՐԾԻՔ

Թ.00.01 – «Փիլիսոփայություն» մասնագիտությամբ

փիլիսոփայական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցող Սոնա Արայի Դավթյանի՝ «Կենսաբարոյագիտությունը որպես միջգիտակարգային գիտելիքի և արժեբանության նոր ձև» թեմայով ատենախոսության մասին

Արդի փիլիսոփայական հետազոտությունների շարքում բավականին լայն տեղ են սկսել զբաղեցնել կենսաբարոյագիտական ուղղվածություն ունեցող հետազոտությունները: Կենսաբարոյագիտական հետազոտությունների զգալի մասը, որը վերաբերում է բուն կենսաբարոյագիտության, բժշկական էթիկայի ու դրանց հարակից հիմնախնդիրներին, մի շարք նվիրյալների շնորհիվ հնարավորինս մանրամասն ուսումնասիրվում է, սակայն հետազոտություն, որը կդիտարկեր կենսաբարոյագիտությունը որպես միջգիտակարգային գիտելիքի ձև և առանձնահատուկ կարևորություն կհաղորդեր կենսաբարոյագիտությանը, որպես արժեքաբանական դրսևորման ձևի, փիլիսոփայական համալիր ուսումնասիրությունների տիրույթում ըստ էության գոյություն չունի: Սույն ատենախոսությունը մասամբ ուղղված է հենց այս բացը լրացնելուն:

Ըստ էության, պաշտպանության ներկայացված ատենախոսության նպատակն է՝ բացահայտել կենսաբարոյագիտության՝ որպես միջգիտակարգային գիտելիքի նոր ձևի փիլիսոփայության էությունը, ինչպես նաև՝ վեր հանել կենսաբարոյագիտության դերը ժամանակակից գիտական գիտելիքի դաշտում:

Ատենախոսության առավելությունների շարքում աչքի է զարնում հատկապես այն հանգամանքը, որ հեղինակն ուսումնասիրել է բավականին մեծ ծավալի գիտական գրականություն, ինչն ընդգծվում է ատենախոսությունում առկա հղումների ու հարուստ գրականության ցանկով:

Հեղինակի առաջադրած և հիմնավորած նորույթների շարքում արժանի են հիշատակման հետևյալ դրույթները.

1) «խիստ գիտակարգային իմաստով կենսաբարոյագիտությունը գիտություն չէ, ավելի շուտ գիտական, փիլիսոփայական ճանաչողության գործընթաց է, գիտական գիտելիքի կազմակերպման նոր ձև»,

2) «գլխավորը հասկանալն է, որ միջգիտակարգայնությունը, ներառյալ բազմակարգայնությունը, ինտեգրատիվությունը չեն գիտության միասնական հիմք ստեղծում, այլ տարբեր գիտությունների միջև փոխգործակցության ճկուն կապեր հաստատելը, ինչը հրականություն կդառնա բարդ համակարգային մտածողությամբ գիտնականների և փիլիսոփաների նոր սերնդի ի հայտ գալով»,

3) «կյանքի, առողջության և մահվան խնդրաշարի նկատմամբ պահանջվում է փիլիսոփայական իմաստավորման նոր մակարդակ, ինչին էլ հենց կոչված է կենսաբարոյագիտությունը՝ որպես կյանքի, առողջության և մահվան պրակտիկ փիլիսոփայության ուրույն ձև»:

Այս դրույթները գործնականում արծարծվող հիմնախնդրի հետագա մշակման բավականին հաջող մեկնակետ կարող են հանդիսանալ:

Բայց և այնպես, ատենախոսության մեջ նկատվել են հետևյալ թերացումներն ու վրիպումները.

1. էջ 43-ում հեղինակը գրում է. «Բարդությունը ոչ թե պարտքի և անձնական շահերի, այլև պարտքի և պարտքի միջև ընտրության մեջ է»: Ո՛չ անմիջապես այս ձևակերպման մեջ, ո՛չ էլ համատեքստից պարզ չէ, թե ի՞նչ 2 պարտքերի միջև կատարվող ընտրության մասին է այստեղ խոսք գնում:
2. էջ 81-ում հեղինակը բերում է այն միքը, թե. «Հին Հռոմում աբորտը հանցագործություն կամ անբարոյականություն չէր համարվում և լայնորեն տարածվում էր»: Այս մտքի հետ այնքան էլ համամիտ չեմ, քանի որ «Հիպոկրատի երդման» տեքստում ի սկզբանե եղել է այսպիսի հատված՝ «... երդվում եմ երբեք կնոջը չտալ գործիք՝ հղիության ընդհատման համար»: Իսկ սա խոսում է առնվազն այն մասին, որ անտիկ աշխարհում աբորտը եթե հանցագործություն չի էլ համարվել, ապա գոնե չի խրախուսվել:
3. Ատենախոսության մեջ տեղ են գտել մի շարք տեխնիկական բացթողումներ, տառասխալներ ու անճշտություններ, օրինակ՝ էջ 4 «...ըստ այն սահմանմամբ...», էջ 11 «...փորձվել է...», էջ 13 3-րդ տողում «խթանել» եզրույթը ավելորդ է. և այլն:

Այսուհանդերձ, սույն ատենախոսությունը կարող է գնահատվել որպես աշխատություն, որը կարող է գնահատվել իբրև փիլիսոփայության բնագավառում կարևոր նշանակություն ունեցող հնդրի լուծում:

Այսպիսով, ուսումնասիրելով ատենախոսությունը և այդ թեմայով հրատարակված աշխատանքները, արձանագրում եմ, որ ատենախոսության թեման արդիական է, գիտական դրույթներն ու եզրակացությունները՝ հիմնավոր, ճշմարիտ ու արդիական ինչպես նաև հավաստում եմ, որ ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կայքում հրատարակված «Հայաստանի հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերին: Ատենախոսության մեջ առնչվող հիմնախնդիրների և դրանց լուծման կարևորությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ այն բավարարում է թեկնածուական ատենախոսություններին առաջադրվող պահանջներին, իսկ ատենախոս Սոնա Արայի Դավթյանը արժանի է Թ 00.01 -- «Փիլիսոփայություն» մասնագիտությամբ փիլիսոփայական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

12.05.2021թ.

Պաշտոնական ընդդիմախոս՝ Աշոտ Արամայիսի Գևորգյան
փիլ. գիտ. թեկնածու, դոցենտ

Փիլիսոփայության ամբիոնի թեկնածու, դոցենտ Ա.Ա.Գևորգյանի ստորագրությունը հաստատում եմ

ՀՊՄՀ Գիտական քարտուղար Մ. Իսպիրյան